

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ ՉԵՌԱՅԻՐՆԵՐԷՆ

Ա.

Նոր-Ջուղայի Ամենափրկչեան վանքի թ. 235 գրչագիր ժողովածուն, որ Ոսկեփորձի կը կոչուի. Տեղեկութիւնք. — Թերթք 380. Նիւթ՝ թուղթ (բարակ). Գիր՝ նոտր-գիր. գրիչ՝ դպիր Սիմէօն. Ժամանակ՝ 1629—1630. տեղ՝ աշխարհն «Ըրզաց», քաղաքն Լէվ:

Գրչագիր Ոսկեփորձի արտագրուած է «ըստ խնդրոյ ջուղայեցի խոջայ Յովհաննէսի՝ ճարտար եւ հմուտ հագիմ ընտիր բժշկի»: Յիշատակարանը գրուած է 354—356 երեսների վրայ:

Չեռագիրը կազմողը բուն Ոսկեփորձիին կցած է այլ թուղթի վրայ գրուած նոտր-գրով «Յառաջնումն սրբոց վարդապետացն ասացեալէն յաղագս վասն մարգալիազութեան եւ գոյացութեան բոլոր մարմնոյ թէ քանի՛ են: Աւգնեա աչը»: 375րդ թերթի երկրորդ երեսից սկսած մինչի 380րդ թերթը կը պարունակեն զեղատոմսեր զանազան ցաւոց:

Մի լրիւ պատկեր կազմելու համար տանք Ոսկեփորձիիս պարունակութեան ամփոփումը՝ ըստ իր վերտառութեանց:

1. Պատմութիւն Հայոց, սկիզբը կիսատ, հեղինակի անուն չկայ. սկսում է «Վազա եւ զԲագ.ի Մանաւազա եւ ի Բագայ լեալ նահապետութիւնք Մանաւազեան եւ Բզնունեաց...» եւ ապա համառօտիւ մինչի ՆՂէ թիւը բազրատունեաց թագաւորութեան վերջը: Ապա կաթուղիկոսաց համառօտ ժամանակագրութիւն՝ Տ. Խաչիկից սկսած մինչի Տ. Մեսրոպ, որից յետոյ յաւելու «եւ այլն յայլ գիրս գտցիս»:

2. Ողբ եւ զուժ ասացեալ Մովսէսի Քերթողի վասն բառնալոյ թագաւորութեան եւ քահանայութեան ազգէս Հայոց.

3. Այս գլուխը վերնագիր չունի, սկսում է «Պարտ է գիտել ուսումնասէր մանկանց, զի ժամանակն բաժանի յերիս» եւ այլն. գրան յաջորդում է յունաց խարդախութիւնը բազրատունեաց գահը կործանելու համար. Գագիկ Պոլիս կոչիլը, աստուածաբանական խնդրոյ մասին վիճաբանելը, 23րդ թերթի երկրորդ երեսից մինչի 41րդ թերթի երկր. երեսը.

4. Գագիկայ հեռանալը Պոլսից, գործերը, մահը, մահուն վրէժը, Ռուբինեանց սկիզբը, 48 թ.

5. Թորոսի մահը, Ռուբէնը, Լեւոնի պատերազմները, 43—52 թերթ.

6. Վասն ցուցման կերպարանաց թաթարին եւ բացայայտութիւն, 52—54 թ.

7. Վասն դիւի, որ ի կերպարանս կնոջ լեալ, 54—57 թ.

8. Վասն բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ, գնալն առ Բաթուն, 57—62 թ.

9. Վասն Դաւթի մոլորելոյն եւ չարին 62—66 1/2 թ.

10. Վաղճան Ս. վարդապետին Վանական, 66 1/2—68 թ.

11. Պատմութիւն Յովհաննէսի Գառնեցոյ, 68 1/2—73 թ.

12. Վասն աշխարհագրին, որ եղև հրամանաւ Մանկուին (ՉԳ. թուին Հայոց), 73—74 թ.

13. Վասն աւերման Բաղդատ քաղաքին եւ քաջութիւնք Պոռ ի իշխանին, 74 1/2—78 1/2 թ.

14. Պատմութիւն թագաւորին Աշոտայ, 78 1/2—88 թ.

15. Պատմութիւն գնալոյն Տ. Պետրոսին Կ. Պոլիս 88—144 1/2, եւ մինչի Մելիք շահի թագաւորելը պարսից.

16. Պատմութիւն Քօնտաֆրայ մինչի 119.

17. Թուղթ Պիղատոսի դատաւորի, զոր գրեաց առ Տիբեր կայսրն յետ խաչելութեան Քրիստոսի մինչի 12 1/2 թ.

18. Պատմութիւն յաղագս խաչի, որ հացունեաց խաչ կոչի, թէ որպէս բերաւ ի Հայս. (Մօրիկի թագաւորելը, մահը, Հերակլը, խաչի առումը, Երուսաղէմի գրաւումը Մոհամատից, Թէոփորոս Ռչտունի, Վարդ պատրիկ, Վարագայ Ս. Խաչի երեւալը մինչի 145 թ.

19. Վասն գետարգել ս. նշանի, որ ի ձեռն Պետրոսի մինչի 146 թ.

20. Հաւատալն Կոստանդիանոսի, 149 1/2.

21. Պատասխանիք ընդդէմ տաճկաց որք են կարապետ Նեոին եւ նոր Արիանոսի մինչի 185 1/2 թ.

22. Այժմ եկեցողք ընդդէմ հրէից Ս. Գրովք մինչի 188 1/2 թ.

23. Թէ վասն է՞ր լուծանեմ գծրագալոյցս գատկին եւ ծննդեան ի ձուկն մինչի 193 1/2.

24. Թէ պարտ է եկեղեցոջն բացաւ գլխով
աղօթել մինչի 197.

25. Խրատք շահաւէտ . . . մինչի 203.

26. Հարցմունք երիտանարդի միոյ վասն
ամենայն առաքինի գործոց եւ պատասխանի
ս. ծերոյ մինչի 216 թ.

27. Բանք գեղեցիկ եւ պիտանիք սըր-
բոյն Աթանասի Աղէքսանդր. հայրապետին
եւ պատասխանիք Կիւրդի Երուսաղէմի մինչի
273 թ.

28. Հարցումն Ս. Գրիգորի ընդ հրեշ-
տակին մինչի 276 թ.

29. Պատմութիւն երկից պատանեկաց, թէ
եզր որպէս շինեաց գտածար տեառն հրա-
մանաւ Դարեհի մինչի 287¹/₂ թ.

30. Թուղթ զոր գրեցին առաքիցին առ
Դարեհ պարսից արքայն մինչի 291 թ.

31. Պատմութիւն Մուրաքէի, Եսթերայ
եւ Համանայ պղծի մինչի 308¹/₂ թ.

32. Վասն գնալոյն Հողերեռնեա ի վե-
րայ յԵրուսաղէմի մինչի 331 թ.

33. Պատմութիւն անպարտ Շուշանայ
եւ շուն ծերոցն մինչի 335 թ.

34. Գիրք եւ բանք Տուրիթայ մինչի
354 թ., որով եւ կը վերջանայ ժողովածուս :
Հարեւանցի համեմատութիւնը Ոսկեփորի-
կիս պատմական մասի, սկսած 3րդ գլխէն
մինչի օրինակի 13րդ գլուխը, ցոյց կու տայ
Կիրակոսի Գանձակեցու (երես 57—220) նոյ-
նութիւնը, ակներեւ է, որ գրիչը պարզապէս
արտադրութիւններ է արել, ինչպէս ինքնին
ամբողջ գիրքն էլ քաղածոյ արտագրու-
թիւն է այլ մատենագրերի, որով եւ կ'ար-
դարանայ անունը :

Այստեղ ծանօթութիւն ասեմ, որ իմ ար-
տագրութեանս մէջ եղծուել էին Ոսկեփո-
րիկի բովանդակութեան 25, 26 եւ 27 գլուխ-
ների քանի մի բառերը, զորոնք վերականգնե-
ցի, այսպէս 27րդ գլխի սկզբի բառը եղ-
ծուած էր, ըստ մտաց շարունակութեան
պէտք է լինէր «Հարցմունք» կամ «Բանք»
կամ «Որատք», ուստի եւ ես առանց բուն
օրինակի դէմ շատ մեղանչելու՝ ընտրեցի
«Բանք» խօսքը : Եւ այլն ըստ այսմ :

Բ.

1. Մի այլ «Ժողովածուի» մէջ, մագա-
ղաթեայ, փոքրադիր, բոլորգրով, որի
սկզբից եւ վերջից, ինչպէս եւ միջից պակաս
է շուրջ 30 թերթ, իր բովանդակութեան մէջ
երբ զ գլուխ ունի Թլկուրանցու տաղեր,

որոնցից 9 քառեակ թուրքերէն՝ Փրկչի
վրայ : Հայ քառեակներէն առաջ կը բերեմ
երկուսը .


11. րդ. Արծիւ եւ երազ թռչիս .
Հայնաճիգ գթելըդ տարածես,
Զինչ աշխարհս հզաւը մանուկ
ի թեւից ծայրն ծրարես :

13րդ (վերջին քառեակ)
Յովհաննէս Թուրքուրանցի, զոր
Ասես, գայլ ոք խրատես,
Եւթանասուն տարի լցեր
ի մեղաց մէջըն կացեր ես :

Շատ ուշադրաւ է ժողովածուիս երրորդ
գլուխը, որ ունի վերտառութիւնս. յԵՐԲ
կամիս խոստովանիլ, այսպէս է. Յիշեմ, որ
ձեռագիրս յիշատակարան չունի, հաւանօրէն
պակասած թերթերի պատճառով անյայտա-
ցած :

Ոոստովանութեան այն կաղապարը, որ
կու տայ հեղինակը, շարայարած է մեղայի
օրինակով, այնտեղէն քանի մի արտայայ-
տութիւններ վերցնելով եւ նմանողութեամբ՝
այնուհետեւ մնացածը շարադրելով : Տանք
ողջ օրինակը :

Մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ,
մեղայ Աստուծոյ : Ոոստովանիմ առաջի Աս-
տուծոյ եւ սրբուհւոյ Աստուածածինին եւ
առաջի ամենայն սրբոց եւ մէջ ս. եկեղեցոյ
եւ առաջի քո հայր սուրբ, զամենայն մեղս
զոր գործեալ եմ, քանզի մեղայ Աստուծոյ,
խորհրդով, բանիւ եւ գործով, կամաւ եւ
ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ
մեղուցեր եմ, մեղայ Աստուծոյ : Մեղուցեր
եմ քաղցր ըստեղծողին, մեղուցեր եմ երկ-
նի եւ յերկրի, մեղուցեր եմ հրեշտակաց եւ
մարդկան. մեղուցեր եմ լուսնի եւ արեգա-
կան եւ աստեղաց, մեղուցեր եմ . . . եւ եւ
ցամաքի, մեղուցեր եմ թռչնոց եւ գլխա-
նաց, մեղուցեր եմ անասնոց եւ զազանաց,
մեղուցեր եմ արանց եւ կանանց, մեղուցեր
եմ երիտասարդաց եւ կուսից, մեղուցեր եմ
ծնողաց եւ սգականաց, մեղուցեր եմ սի-
րելեաց եւ բարեկամաց, մեղայ Աստուծոյ :
Մեղուցեր եմ երկոտասան անգամաւքս, է
ըզգայութեամբս, վեցեկի շարժամբս, խ
երակօքս, երեք հարիւր կ եւ ե օգվածովս,
մեղայ աւրն ի բոլոր, շաբաթն ի բոլոր, ա-
միսն ի բոլոր, տարին ի բոլոր, մեղայ Աս-
տուծոյ, զպարուիրանն Աստուծոյ չպահեցի,



զօրն միաշարաթին չպահեցի, սրբոց տօնն չկատարեցի, պահան սրբութեամբ չպահեցի, եղբայրութիւնն չարարի, զընկերն ատեցի եւ զրկեցի, ճշմարտութիւնն ատեցի, կեղծաւորութիւնն, սնափառութիւնն, փառամոլութիւնք, մարդահաճութիւնք, խարէութիւնք սիրեցի, հիւանդ չտեսի, սգաւորն չմխիթարեցի, գերելոց չօգնեցի, յուսով չհաստատեցի, զաղքատն ատեցի եւ դառնացուցի, քաղցեալն չկերակրեցի, ծարաւեալն չարուցի, մերկն չգգեցուցի, ընդ բանդարկեալն չցաւակեցի, մեծի եւ փոքու եւ ծնողաց սիրտն խոցեցի եւ դառնացուցի, կարգաւորաց, բարեդործեաց չսպասաւորեցի, հիւրընկալութիւն, հիւրասիրութիւն չարարի, ընդ եղբաւր եւ ընդ ամեն հետն մեծարանութեամբ եւ ամպարտաւանութեամբ վարեցի, զաստուածասիրութիւնն եւ բարի դործութիւնն ի բաց թողի, զաշխարհիս զհարստութիւն սիրեցի, մեղայ Աստուծոյ: Մտօքս հանապաղ չարն խորհեցի, հպարտութիւն, ամպարտաւանութիւն, ռիսակալութիւն, պոռնկութիւն, շնութիւն, ազահութիւն, թերահաւատութիւն, յուսահատութիւն, անօրինութիւն, զրկողութիւն, մատնութիւն, այլ ինչ մեղք որ կամաւ չարն սատանան ի միջի աշխարհիս սերմաներ է, հանապաղ մտօքս կու գործեմ, մեղայ Աստուծոյ, մեղուցեր եմ աշաւքս արատ հայելով, ինչ որ աշաւք որ տեսեր եմ ամենայն մտօքս ցանկացեր եմ. ահանջովս մեղուցեր եմ, չար բարբառնջմանց, բամբասանօք զատարկասօսից ահանջաղբութիւն եմ արեր: Աստուածային պատուիրանացն, ճայնի աւերարանից, քարոզից վարդապետաց ահանջ չեմ դրել, մեղայ տեսոն Աստուծոյ:

Մեղուցեր եմ բերանով եւ չարեշարքուֆր տալով կենդանեաց եւ ննջեցելոց, սուտ երդում ուտելով, խաչով, աւետարանով, սրբոց նշխարով սուտ վկայութիւն եմ տվեր, մարդոց չարախօսութիւն եմ արեր, հերձուած խօսելով ընդդէմ օրինաց եւ պատուիրանաց Աստուծոյ. վասն իմ անպատշաճ խաւսիցն բազումք զայթակղեցուցեր եմ. ազահ կերեր եմ, ազահ ըմպեր եմ, գետներ եմ, դատարկ խօսեր եմ, չըզոհացեր եմ, վարդապետ, քահանայք եւ առաջնորդ մեծ եւ փոքր բամբասեր եմ, մեղայ Աստուծոյ: Իմ անչափ մեղքն թողեր եմ, զայն բամբասեր եմ. վայ ինձ հազար բերան, որ

հանապաղ զԱստուած փառաբանութիւն ծուլացեր եմ, փոխանակ աւրհնելոյ անիծեր եմ, մեղայ Աստուծոյ: Զեռքովս մեղուցեր եմ, առ Աստուած չեմ տարածեր, ողորմութիւն չեմ տուեր, աղքատաց եւ կարօտելոց եւս առաւել զրկեր եմ, կողոպտեր եմ, գողացեր եմ, ըսպաններ եմ, հարկաներ եմ, մարմնոյ չօշափութիւն գործեր եմ, ցանկութիւնս կատարեր եմ, մեղայ Աստուծոյ: Ոտովս մեղուցեր եմ, դուռն եկեղեցոյ չեմ գնացեր, ծունր չեմ դրեր, իմ ստեղծողին երկրպագութիւն չեմ արել, չար ճանապարհն ընթացել եմ, չարին եմ հետեւել, մեղայ Աստուծոյ: Մարմնոյ կարիքս կատարելով հոգիս ըսպաններ եմ. երազական հանդիպեր եմ, չեմ խոստովաներ եմ, անարժան եկեղեցի եմ մտեր, չեմ աղօթեր, չեմ արտասուեր, իմ մեղքս ի միտս չեմ բերեր, Աստուծոյ հան եւ երկիւղն միտքս չեմ բերեր, զրպարտութիւն եմ արեր, քահանայի ասմանց ահանջ չեմ դրեր. բազում անգամ ցօյցս մարդկան աղօթ եմ արել, արտասովել եմ, ողորմութիւն տալն փառս մարդկան եմ արել, կամակատար եմ, ինքնահաւան, անողորմ եմ, անդուլտ եմ, աներկիւղ եմ, ազահ եմ, ընչասէր եմ, մեղսասէր եմ, թերի եմ, անազահ քնանալով մարմինս պարարեր եմ, վասն իմ անաւրէն գործոցն զԱստուած բարկացուցեր եմ, սատանայի բնակարան եմ եղել, նորա կամքն ամենայն կատարեր եմ հանապաղ. իմ մեղքն անչափ է եւ անհամար, ոչ է յիշելոյ եւ ոչ է անելոյ, վայ է ինձ մեղաւորիս՝ հազար բերան, զորն ասեմ կամ զորն խոստովանիմ, զի անթիւ է անցանք իմ, անանելի է անօրէնութիւնք իմ, աններելի են ցաւք իմ, եւ անբժշկելի են վէրք իմ, ի ծննդենէ աւագանին մինչեւ ցայսաւր ամենայն մեղաւք մեղուցեր եմ, մեղայ Աստուծոյ, սեվերես եւ սպարտական եմ իմ քաղցր ստեղծողին, չեմ արժանի խոստովանելոյ, մարմնոյ եւ արեան Քրիստոսի ճաշակելոյ, այլ կողկողալի զիմօք եւ արտասուաւք արաչօք փրղծկալ սրտիւ եւ հառաչմամբ ճայնիւ աղաչեմ ողորմած եւ մարդասէր Աստուած, զի իւր բարերար եւ գթութեամբ կամաւքն, ամենասուրբ ծնողին իւրոյ եւ ամենայն սրբոց բարեխօսութեամբն ներումն տացէ բազում յանցանաց իմոց եւ քաւեսցէ զիս ի մեղաց իմոց եւ քոյին սուրբ աղաւթիւք, հայր սուրբ. զքեզ ունիմ միջնորդ

հաշտութեան եւ բարեխաւս առ միածին որդին Քրիստոս, զի իշխանութենէ, որ տուեալ է քեզ, արձակեալ զիս ի կապանաց մեղաց իմոց, ազաչեմ զքեզ:

Այս ամբողջ հատուածի մէջ բովանդակութենէն աւելի, թերեւս գրութեան լեզուն հետաքրքրելի լինի բանասիրաց համար, որ այնքան խօսակցութեան լեզուն մօտ է:

Գ.

Պարսկահանդիսատանի առաջնորդ Թագէոս Արքեպիսկոպոսը, որ երկար տարիներ պաշտօնավարեր է Ն. Զուլալում եւ այնտեղ էլ կնքել է իր մահկանացուն, ի մի է ամփոփել Ներսէս Աշտարակեցու հետ ունեցած իր ամբողջ գրագրութիւնը եւ կազմել մի մեծագիր (սովորական գրելու թղթի մեծութեան մօտաւորապէս 38 ս. երկարութեամբ) հաստ տետր: Թագէոս վարդապետը (յետոյ եպիսկոպոս) Աշտարակից ու աշխատակիցներից եւ կողմնակիցներիցն էր՝ ընդդէմ Յովհաննէս Կարբեցու եւ իր կուսակիցների: Այդ ժողովածուն հետաքրքրական է Ներսէսի շրջանի պատմութեան համար, եւ միակն է իբր հաւաքածու՝ նոյն շրջանի նիւթերի: Արժէր, որ այդ ձեռագիրն երթար էջմիածնի պետական մատենադարանի դիւանական բաժինը:

Իբր վերջարան պտտչած կը համարիմ յիշել, որ Ն. Զուլալի մատենադարանի մէջ հարաւային Պարսկաստանի հայ գիւղերում ցրուած գրչագրերը հաւաքելու գործում գնահատելի ծառայութիւն մատուցած է հանգուցեալ Եղնիկ Ծ. վարդապետը, որ այնքան վատօրէն սպանուեց Համադանում 1922 թուի ապրիլի 30ին:

Ասել թէ պարսկահայութեան մօտ եղած բոլոր գրչագրերն են ի մի հաւաքուած, սխալ կը լինէր, քանի որ դեռ շատ տեղերում մասնաւոր ընտանիքների մօտ պահուած կը մնան իբր տոհմական յիշատակներ, համարեա՛ իբր սրբութիւն՝ դեռ չա՛տ գրչագրեր, որոց մէջ Յայսմաւուրքներ՝ ընտիր յիշատակարաններով: Ի դէպ է յիշել, որ Արաղի (Սուլթանաբաղի) շրջանի մէկ հայ գիւղում դոյութիւն ունի մի Յայսմաւուրք, որի յիշատակարանը ժամանակակից գրչով եւ բերնով նկարագրում է Շահաբասեան գաղթը շատ լաւ գոյներով, հակառակ այն ողբաձեւ նկարագրութեան, որ յետոյ տայիս է Առա-

քել Դավրիթեցին իր պատմութեան մէջ՝ ի լրոյ առնելով իր տեղեկութիւնները: Շատ հետաքրքրական է այդ գրչագրի յիշատակարանը տպագրուած տեսնել:

ԱՐՄԷՆ Ծ. Վ. ՂԱՃԱՆ



Գ Ի Յ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն

Մ Ի Հ Ր Ը Հ Ա Յ Ո Յ Մ Է Ձ

(Շարունակութիւն):

Գ.

Մ Ի Հ Ր Ը Պ Ա Ջ Տ Ո Թ Ե Ն Ն Կ Ե Ն Գ Ր Ո Ն Ն Ե Ր Ը

1.

Հայ միհրապաշտութեան կենդրոնների հարցը նոր է դրուած հրապարակի վրայ: Այս մասին առաջին որոշ խօսքն ասողը եղել է Ստեփան Կանայեանցը, որին է պատկանում նաեւ, ինչպէս ասել ենք, Մհեր-Միհր կարեւոր զուգադրութեան միտքը:

Կանայեանցի կարծիքով հայ միհրապաշտութեան կենդրոնը Հայաստանի հարաւային նահանգներից մէկն էր — Վասպուրականը:

«Վասպուրականը, — գրում է նա 1907 թուականին, — միհրականութեան կենդրոն է երեւում: Միայն այստեղ են երեւում Միիր-ով բարդուած անուններ՝ Մեիր-ուրժան, Մեհ-ենդակ, Մեհ- առ: Կանգուար — Ագուաւախարը, Պաղատը, Արամաղղայ դիււաց տունը, կրակ քոյրը եւ աղբիւր եղբայրը Բութ տեղում, որ յիշեցնում է մեկ Բութկայ աքաղաղը, երբեմն արչալոյսն աւետող, եւ Ս. Տիկինը, Հոգեաց Տիրամօր վանքը եւ Դարբնաց քարը Միհրին նուիրական վայրեր են եղել. իսկ մեր Մհեր-Միհրն էլ այն կողմերն է փակուած: Ոմանց ասելով Վանայ միւս անունը՝ Շամիրամակերտ = Շահ-միհր-կերտ (Ստեփան Պալասանեան, Պատմութիւն Հայոց, 11 էջ 52, Թիֆլիս 1890)», Զոջանց տան պատմականը, 49—59:

Երեք տարի յետոյ այս բանասէրը իւր մի այլ գրուածքի մէջ կրկնում է նոյն միտքը հետեւեալ հատուածում: